

0205 <<Սոցիալական աշխատանք>> մասնագիտության <<Սոցիալական աշխատանքի մասնագետ>> որակավորմամբ մասնագետի նկարագիր՝ միջին մասնագիտական կրթության մակարդակով

Ուսման տևողությունը 3 տարի

Հ/Հ	Անվանումներ	Նկարագրերը
1	2	3
1.	Մասնագիտության անվանումը	Սոցիալական աշխատանք
2.	Դերը	Տվյալ տարածաշրջանում (համայնքում), առանձին կազմակերպություններում ընտանիքներին, առանձին անձանց, բնակչության խոցելի խմբերին (այսուհետ՝ հաճախորդներ) սոցիալական ծառայությունների մատուցում
3.	Խնդիրների բնագավառը	Սոցիալական աջակցության, զբաղվածության, սոցիալական ապահովության, տարեցների և հաշմանդամների, ընտանիքի, կանանց և երեխաների, կրթության, առողջապահության և այլ սոցիալական հիմնախնդիրների հետ կապված սոցիալական ծառայությունների մատուցում և կազմակերպական այլ աշխատանքների կատարում:
4.	Պատասխանատվության աստիճանը	Տվյալ տարածաշրջանում (համայնքում), առանձին կազմակերպություններում հաճախորդների բացահայտման, սպասարկման, սոցիալական ծառայությունների մատուցման հետ կապված ինքնուրույն աշխատանք, ինչպես նաև աշխատանք բարձր որակավորում ունեցող սոցիալական աշխատողի ղեկավարությամբ:
5.	Աշխատանքների բարդության աստիճանը	Միջին բարդության աշխատանք, որը պահանջում է նախնական մասնագիտական կրթություն:
6.	Աշխատանքային գործընթացներ	
6.1.	Գործընթաց 1	Կազմակերպական՝ տվյալ տարածաշրջանում (համայնքում), առանձին կազմակերպություններում սոցիալական կարիք ունեցող հաճախորդների հաշվառման, նախնական խորհրդատվության, հանդիպումների կազմակերպման, տեղեկատվության փոխանցման և այլ բնույթի աշխատանքների կատարում:
6.2.		Իրազեկման՝ տվյալ տարածաշրջանում (համայնքում), առանձին կազմակերպություններում սոցիալական կարիք ունեցող

	Գործընթաց 2	հաճախորդներին սոցիալական ոլորտի բարեփոխումների և ոլորտի կողմից շահառուներին ընձեռնվող հնարավորությունների վերաբերյալ իրազեկման աշխատանքների կատարում:
6.3.	Գործընթաց 3	Կառավարչա-կազմակերպչական՝ անկախ սեփականության ձևից, տվյալ տարածաշրջանում (համայնքում) սոցիալական ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունների բացահայտում, դրանց հետ համագործակցման աշխատանքների կազմակերպում:
6.4.	Գործընթաց 4	Գործնական – կիրառական՝ տվյալ տարածաշրջանում (համայնքում), առանձին կազմակերպություններում սոցիալական պաշտպանության կարիք ունեցող հաճախորդներին տարաբնույթ սոցիալական ծառայությունների մատուցում, հաճախորդների հետ պարզա սոցիալական դեպքերի վարում, դրանց վերաբերյալ համապատասխան որոշումների ներկայացում բարձր որակավորում ունեցող սոցիալական աշխատողին:
6.5.	Գործընթաց 5	Մանկավարժական-հոգեբանական՝ սոցիալական ոլորտի կազմակերպություններում դաստիարակչական աշխատանքների և պարզ դեպքերում հոգեբանական խորհրդատվության աշխատանքների կատարում:
7	Սոցիալական պաշտպանության բնագավառի բոլոր ոլորտներին անհրաժեշտ ընդհանուր մասնագիտական գիտելիքներ	<p>Սոցիալական սպասարկողը պետք է իմանա.</p> <ul style="list-style-type: none"> - սոցիալական աշխատողի (սպասարկողի) աշխատանքի էթիկայի կանոնները, - տունայցերի նախապատրաստման, անցկացման և տունայցի արդյունքների ամփոփման եղանակները, ձևերը և սկզբունքներ, - հաճախորդի հետ զրույցի անցկացման մեթոդները - բանակցությունների վարման սկզբունքները, - հաճախորդներին գրանցելու ձևերը և կիրառվող ձևաթղթերի տեսակներն ու լրացման կարգը, -սոցիալական կարիք ունեցող հաճախորդների բացահայտման սկզբունքներըն ու ձևերը, - սոցիալական ոլորտում պետական քաղաքականության սկզբունքները և իրականացվող հիմնական ծրագրերը՝ ըստ ենթաոլորտների, - սոցիալական ոլորտի հիմնական օրենքները (ՀՀ <<Աշխատանքային օրենսգիրքը>>,<<Սոցիալական աջակցության մասին>> ՀՀ օրենքը, <<Կենսաթոշակների

		<p>մասին»» ՀՀ օրենքը, ««Բնակչության գործազրկության դեպքում սոցիալական ապահովագրության մասին»» ՀՀ օրենքը, ««Երեխաների իրավունքների պաշտպանության մասին»» ՀՀ օրենքը) և դրանցով կարգավորվող իրավահարաբերությունները,</p> <ul style="list-style-type: none"> - կազմակերպությունների հետ սոցիալական աջակցությանն ուղղված աշխատանքների կատարման եղանակները, - սոցիալական դեպքի վարման ժամանակակից տեխնոլոգիաների սկզբունքները, - դաստիարակչական աշխատանքների սկզբունքները, - հոգեբանության սկզբունքները, - հաշվետվությունների կազմման և պարզ վերլուծությունների կատարման ձևերը և սկզբունքները, - միջանձնային հարաբերությունների կառուցման ձևերն ու սկզբունքները, - փաստաթղթերի տեսակները, փաստաթղթաշրջանառության (այդ թվում նաև էլեկտրոնային) սկզբունքները,
8.	<p>Սոցիալական պաշտպանության բնագավառի բոլոր ոլորտներին անհրաժեշտ ընդհանուր մասնագիտական կարողություններ</p>	<p>Սոցիալական սպասարկողը պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> - կատարել տունայցեր, - հաճախորդի հետ վարել զրույցներ և բանակցություններ, - վարել պարզ սոցիալական դեպքեր, ներկայացնել դրանց վերաբերյալ որոշումների առաջարկներ, - գրանցել, հաշվառել հաճախորդին որպես սոցիալական կարիք ունեցողի և ուղղորդել սոցիալական ոլորտի համապատասխան մարմին՝ անհրաժեշտ ծառայությունը ստանալու համար, - հիմնավորված բացատրական աշխատանքներ տանել հաճախորդների հետ, վերջիններիս իրավունքների, նրանց համար նախատեսված սոցիալական ծառայությունների տրամադրման հնարավորությունների վերաբերյալ, - գրանցել, հաշվառել, պահպանել և փոխանցել շահառուի կողմից ներկայացված փաստաթղթերը (թղթային և էլեկտրոնային տարբերակներով), - բացահայտել սոցիալական կարիք ունեցող հաճախորդներին, - աշխատանքներ տանել կազմակերպությունների հետ սոցիալական կարիքներ ունեցող հաճախորդների

		բացահայտման և նրանց համապատասխան աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ, - տանել դաստիարակչական աշխատանքներ երեխաների խնամքի հաստատություններում:
9.	Սոցիական պաշտպանության բնագավառի առանձին ուլորտներում անհրաժեշտ գիտելիքներ և կարողություններ (մասնագիտացում)	
9.1.	Սոցիական աջակցության ուլորտ	
	պետք է իմանա	<ul style="list-style-type: none"> - սոցիալական աջակցության պետական կառավարման համակարգը և մարմինները, դրանց գործառույթները և ֆունկցիաները, - սոցիալական աջակցության ոլորտում միջազգային փորձը և բարեփոխումների հիմնական ուղղությունները ՀՀ-ում, - սոցիալական աջակցության ոչ պետական կազմակերպությունները, դրանց գործունեության առանձնահատկությունները, - սոցիալական պաշտպանության ոլորտում ոչ պետական կազմակերպությունների գործունեությունը կարգավորող օրենսդրությունը, - Սոցիալական աջակցության մասին և պետական նպաստների մասին ՀՀ օրենքները, դրանցով նախատեսված աջակցությունների և նպաստների տեսակները, աջակցությունների և նպաստների տրամադրման պայմանները, - <<Սոցիալական աջակցության>> մասին և <<Պետական նպաստների մասին>> ՀՀ օրենքներից բխող այլ իրավական ակտերը, - նպաստների նշանակման համար անհրաժեշտ հավաքագրվող փաստաթղթերի տեսակները, - նպաստների համակարգը, դրանց նշանակման և կասեցման պայմանները, - տարեցներին տրամադրվող սոցիալական աջակցության

		<p>տեսակները և դրանց տրամադրման պայմանները,</p> <ul style="list-style-type: none"> - երեխաներին տրամադրվող սոցիալական աջակցության տեսակները և դրանց տրամադրման պայմանները, - հաշմանդամներին տրամադրվող սոցիալական աջակցության տեսակները և դրանց տրամադրման պայմանները, - տարիքային հոգեբանության առանձնահատկությունները, - երեխաների իրավունքների պաշտպանության հիմնախնդիրները սոցիալական աջակցության ոլորտում, - տարեցներին և հաշմանդամներին սոցիալական աջակցության ոլորտում ցուցաբերվող աջակցության ձևերը և եղանակները, - խոցելի այլ խմբերին սոցիալական աջակցության ոլորտում ցուցաբերվող աջակցության ձևերը և եղանակները:
	<p>պետք է կարողանա</p>	<ul style="list-style-type: none"> - բացահայտել սոցիալական աջակցության կարիք ունեցող հաճախորդներին համայնքում, կազմակերպությունում, - գնահատել սոցիալական աջակցության կարիքները հաճախորդների մոտ, - ուղղորդել հաճախորդներին սոցիալական աջակցության տարբեր տեսակներ ստանալու համար, - ցուցաբերել անհրաժեշտ սոցիալական աջակցություն սոցիալական տարբեր խմբերին, ընտանիքներն և անհատներին, - ներկայացնել առաջարկություն նշանակված սոցիալական աջակցությունը երկարացնելու, կասեցնելու, նոր տեսակի աջակցություն նշանակելու համար, - հաշվարկել նպաստի չափը, կախված հաճախորդի իրավիճակից, - հավաքագրել, գրանցել, հաշվառել սոցիալական աջակցության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերը, - կազմել և ներկայացնել հաշվետվություններ առավել բարձր որակավորում ունեցող սոցիալական աջախատողին:
<p>9.2.</p>	<p>Սոցիալականա ապահովության ոլորտ</p>	
		<ul style="list-style-type: none"> - սոցիալական ապահովության ոլորտում պետական կառավարման համակարգը և մարմինները, դրանց

	<p>պետք է իմանա</p>	<p>գործառույթները և ֆունկցիաները,</p> <ul style="list-style-type: none"> - սոցիալական ապահովության ոլորտում միջազգային փորձը և բարեփոխումների հիմնական ուղղությունները ՀՀ-ում, - <<Կենսաթոշակների մասին>> ՀՀ օրենքը և այդ օրենքից բխող այլ իրավական ակտերը, - կենսաթոշակների տեսակները, դրանց հաշվարկելու եղանակները, - կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, - կենսաթոշակ նշանակելու, կասեցնելու, փոփոխելու, վերահաշվարկելու և վերանշանակելու պայմանները, - սոցիալական ապահովության տարածքային կենտրոնների աշխատանքի առանձնահատկությունները, - անհատական հաշվառման համակարգի ձևավորման, համապատասխան տեղեկատվության մուտքագրման, քաղաքացիներին տեղեկատվության տրամադրման կարգը և ձևերը:
	<p>պետք է կարողանա</p>	<ul style="list-style-type: none"> - տարբեր դեպքերի համար հաշվարկել կենսաթոշակները, - հավաքագրել, գրանցել, հաշվառել կենսաթոշակի նշանակման համար անհրաժեշտ փաստաթղթերը, - ներկայացնել առաջարկություն նշանակված կենսաթոշակը կասեցնելու, վերականգնելու, նոր տեսակի կենսաթոշակ նշանակելու համար, - մուտքագրել քաղաքացիների վերաբերյալ տվյալները անհատական հաշվառման տեղեկատվական բազա, - անհատական հաշվառման բազայից տրամադրել անհրաժեշտ տեղեկատվությունը քաղաքացիներին, - կազմել և ներկայացնել հաշվետվություններ առավել բարձր որակավորում ունեցող սոցիալական աշխատողին,
<p>9.3.</p>	<p>Աշխատանքի և զբաղվածության ոլորտ</p>	
	<p>պետք է իմանա</p>	<ul style="list-style-type: none"> - զբաղվածության ոլորտում պետական կառավարման համակարգը և մարմինները, դրանց գործառույթները և

		<p>ֆունկցիաները,</p> <ul style="list-style-type: none"> - զբաղվածության ոլորտում միջազգային փորձը և բարեփոխումների հիմնական ուղղությունները ՀՀ-ում, -զբաղվածության մասին օրենսդրությունը և դրանից բխող այլ իրավական ակտերը, - ըստ տարածաշրջանների ՀՀ տնտեսության զարգացման առանձնահատկությունները, - գործազրկության նպաստի նշանակման, կասեցման և վերականգնման կարգը և դրանց համար անհրաժեշտ փաստաթղթերի տեսակները, - զբաղվածության տարածքային մարմինների հիմնական գործառույթները, -տարածաշրջանում գործատուների հետ տարվող աշատանքի տեսակները, - աշատաշուկայի հետազոտության հիմնական սկզբունքները և գործիքները, - տարեցների և հաշմանդամների զբաղվածության հիմնանդիրները, - գործազուրկների հաշվառման, փաստաթղթերի ընդունման և գրանցման կարգը, - գործատուների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, գրանցման և փոանանցման կարգը:
<p>պետք է կարողանա</p>		<ul style="list-style-type: none"> - տարբեր դեպքերի համար հաշվարկել գործազրկության նպաստը և գործատուներին տրամադրվող այլ նյութական աջակցության չափը, - հավաքագրել, գրանցել, հաշվառել գործազրկության նպաստի նշանակման համար անհրաժեշտ փաստաթղթերը, - ներկայացնել առաջարկություն նշանակված գործազրկության նպաստը կասեցնելու, վերականգնելու վերաբերյալ, - մուտքագրել քաղաքացիների և գործատուների վերաբերյալ տվյալները տեղեկատվական բազայում, - քաղաքացիներին և գործատուներին տրամադրել համապատասխան տեղեկատվություն թափուր աշատատեղերի և ազատ աշատուժի վերաբերյալ,

		<ul style="list-style-type: none"> - կազմել մասնագիտության կամ պաշտոնի նկարագիրը, - մասնակցել տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման վերապատրաստման դասընթացների ծրագրի մշակմանը, - կազմել և ներկայացնել հաշվետվություններ առավել բարձր որակավորում ունեցող սոցիալական աշխատողին,
--	--	--

ՀԱՎԵԼՎԱԾ 2.

02 05 «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

0205 <<Սոցիալական աշխատանք>> (ծառայող) մասնագիտության մասնագիտական գիտելիքների և կարողությունների գնահատման չափանիշներն են.

1. Պետական կրթական (որակավորման) չափորոշյին համապատասխան բոլոր մոդուլների ուսումնառության արդյունքներով սահմանված մասնագիտական գիտելիքները ենթակա են լրիվ ծավալով յուրացման: Դրանց ստուգումն իրականացվում է.

- համալիր թեստային հարցման միջոցներով: Թեստը բաղկացած է վերոնշյալ ուսումնառության արդյունքներին վերաբերող նյութերից և պետք է պարունակի մինչև 50 հարց: Թեստի հարցերը պետք է ունենան երեք կամ չորս ենթադրյալ պատասխաններ, որոնցից ճիշտ է միայն մեկը: Արդյունքը համարվում է դրական՝ եթե ճիշտ պատասխան է տրվել թեստի հարցերի ոչ պակաս քան 75%-ին:

- Ավարտական ստուգումը կարող է իրականացվել նաև հարց ու պատասխանի կամ իրավիճակային խնդիրների առաջադրմամբ:

2. Մասնագիտական կարողությունների ստուգման համար պահանջվում է ներկայացնել սոցիալական աշխատողի (ծառայողի) աշխատանքային առօրյայի նկարագիրը կամ կազմել աշխատանքային գործընթացի ծրագիր՝ ընդգրկելով ստորև նշված գործողությունները.

ա. Տունայցի ծրագրի մշակում.

Ելնելով սոցիալական դեպքի նկարագրից սովորողը կազմում և տունայցի ծրագիր հետևյալ քայլերով.

- տունայցի նախապատրաստում
- տունայցի իրականացում (տունայցի հարցաշարի պատրաստում, հարցաշարից հնարավոր շեղումների, հարակից հարցերի նախանշում)

- տունայցի ավարտման և ամփոփ հաշվետվության պատրաստում

բ. Սոցիալական դեպքի վարում

Ելնելով սոցիալական դեպքի նկարագրից կազմում է շահառուի հետ սոցիալական վարման ծրագիրը

գ. Շահառուի ընդունելության կատարում.

Ելնելով սոցիալական դեպքի նկարագրից սահմանում է այն փաստաթղթերի ցանկը և գործողությունների հաջորդականությունը, որոնք պետք է կատարի սոցիալական աշխատողը շահառուի ընդունելության ժամանակ:

Արդյունքը համարվում է բավարար, եթե վորոնշյալ գործողությունների առնվազն 80% - ը կատարվել է չափորոշով նախատեսված չափանիշներին համապատասխան՝ պահպանելով աշխատանքի էթիկայի բոլոր կանոններն ու նորմերը: